

ΥΠΟΥΡΓΕΙΟ ΠΑΙΔΕΙΑΣ, ΑΘΛΗΤΙΣΜΟΥ ΚΑΙ ΝΕΟΛΑΙΑΣ
ΔΙΕΥΘΥΝΣΗ ΜΕΣΗΣ ΕΚΠΑΙΔΕΥΣΗΣ
ΕΝΙΑΙΕΣ ΤΕΛΙΚΕΣ ΑΠΟΛΥΤΗΡΙΕΣ ΓΡΑΠΤΕΣ ΕΞΕΤΑΣΕΙΣ 2023-2024
Γ΄ ΤΑΞΗ ΛΥΚΕΙΟΥ
ΗΜΕΡΟΜΗΝΙΑ: 21 Μαΐου 2024
ΕΞΕΤΑΖΟΜΕΝΟ ΜΑΘΗΜΑ: ΑΡΜΕΝΙΚΑ
Α΄ ΣΕΙΡΑ
ΚΩΔΙΚΟΣ ΜΑΘΗΜΑΤΟΣ: Γ012
ΣΥΝΟΛΙΚΗ ΔΙΑΡΚΕΙΑ ΓΡΑΠΤΗΣ ΕΞΕΤΑΣΗΣ: 135 λεπτά
ΤΟ ΕΞΕΤΑΣΤΙΚΟ ΔΟΚΙΜΙΟ ΑΠΟΤΕΛΕΙΤΑΙ ΑΠΟ ΕΠΤΑ (7) ΣΕΛΙΔΕΣ

ΟΔΗΓΙΕΣ (για τους εξεταζόμενους)

1. Στο εξώφυλλο του τετραδίου απαντήσεων να συμπληρώσετε όλα τα κενά με τα στοιχεία που ζητούνται.
2. **Να απαντήσετε ΟΛΑ τα ερωτήματα.**
3. Να μην αντιγράψετε τα θέματα στο τετράδιο απαντήσεων.
4. Να μη γράψετε πουθενά στις απαντήσεις σας το όνομά σας.
5. Να απαντήσετε στο τετράδιό σας σε όλα τα θέματα μόνο με μπλε πένα ανεξίτηλης μελάνης. Μολύβι επιτρέπεται, μόνο αν το ζητάει η εκφώνηση και μόνο για πίνακες, διαγράμματα κ.λπ.
6. Απαγορεύεται η χρήση διορθωτικού υγρού ή διορθωτικής ταινίας.

1 ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԵԱՆ ԸՄԲՈՆՈՒՄ ԵՒ ԼԵԶՈՒԱԿԱՆ ԱՃԻԱՏԱՆՔ

(30 նիշ)

Ուշադրութեամբ կարդացէք հետեւեալ գրութիւնը եւ պատասխանեցէք հարցումներուն:

<<Քարեր Յայաստանի>>



Քարեր, քարեր Յայաստանի, սարերն ի վար հոսող քարեր,
Երկինքն ի վեր խօսող քարեր, քարեր վանքի ու ոստանի...
Ո՛վ իմանայ՝ ո՞ր ամրոցի պարիսպներից պոկուած քարեր,
Քանի, քանի, քանի անգամ լքուած, քանի, քանի, քանի անգամ
Փրկուած քարեր Յայաստանի: Ամեն կողմից շրջապատում
Կանչում էք ինձ ամեն կողմից,- մեկը մեկի ուսին թիկնած,
Մեկը մեկի ուսին թիկնած, մեկը մեկի շոգից շիկնած,
Խամրած քարեր, մամռած քարեր, ձեր բախտի հետ հաշտուած քարեր...
Խոնարհ, խոհուն, խորհրդաւոր, երագելու, անրջելու եւ ակնածանք
Ներշնչելու պատրաստ քարեր Յայաստանի:

* * *

Ձեր քարեղէն երակներում դուք կայծակներ ունէք պահած.

Թէ զայրացաք՝ դուրս կը թռչեն երկինքն ի վեր:

Ձեր քարտեղէն լռութեան մէջ մի հեռաւոր հառաչանքի
Արձագանգներ ունէք պահած, թէ տիրեցիք դուրս կը թռչեն
Ու կը հնչեն երկինքն ի վեր... իմ քայլերից մաշուած քարեր,
Իմ ձեռքերով տաշուած քարեր, ծաղիկ դարձած, ծաղիկներով
Նախշուած քարեր Զայաստանի: Ես ունկնդիր
Չազարամեայ ձեր խորհուրդին, ես քարերից բուսած որդին
Ձեր քարտեղէն գերդաստանի, ձեր այդ պայծառ հայեացքներով
Ձեր աչքերով պիտի նայեմ, աշխարհ չեկած սերնդներին...
Իմ սրտի մէջ, իմ երգի մէջ բեկուած քարեր Զայաստանի,
Մէկը մէկին դարձած վահան, դարձած ե՛լ բախտ ե՛լ Երեւան,
Ծիածանի եօթ գոյներով ներկուած քարեր Զայաստանի:

Չամօ Սահեան <<Քարեր Զայաստանի>>



Ա- Բանաստեղծը ի՞նչ յատկանիշերով կը ներկայացնէ Զայաստանի քարերը առաջին հատուածին մէջ: Յիշեցէք հիւսկ (5) տարբեր յատկանիշեր եւ ապա ձեր գրածը հաստատելու համար իր խօսքերէն ընտրեցէք եւ գրեցէք հիւսկ (5) բանաստեղծական տողեր: / 5 նիշ /

Բ- Բանաստեղծութեան մէջ կարելի՞ է տեսնել զգացումներու կապ մը Զայաստանի քարերուն եւ բանաստեղծին միջեւ: Ձեր խօսքը հաստատեցէք

բանաստեղծութենէն երեք (3) տարբեր միտքեր գրելով: Ապա ընտրեցէք մէկը եւ բացատրեցէք անոր կարեւորութիւնը: / 5 նիշ /

Գ- Նման բանաստեղծութիւններ կարդալը հայ աշակերտներու համար օգտակար կը նկատե՞ք: Ինչու՞ համար: Տուէք չորս (4) պատճառներ ձեր խօսքը համոզիչ դարձնելու համար: / 8 նիշ /

Դ- Իսկ դուք որպէս հայ աշակերտներ եւ աշակերտուհիներ ի՞նչ մտածումներ ունիք Հայաստանի քարերուն մասին: Ի՞նչ կը ներշնչեն ձեզի եւ ինչու՞: Գրեցէք ձեր մտածումները: / 80 բառի շուրջ / / 10 նիշ /

Ե- Գտէք եւ գրեցէք այս բառերուն հոմանիշը բանաստեղծութեան մէջէն: / 2 նիշ /

Համեստ	
Խելացի	



2 ՆԻԹԻ ԸՄԲՈՆՈՒՄ ԵՒ ԼԵՉՈՒԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ (30 նիշ)

Ուշադրութեամբ կարդացէք հետեւեալ հատուածը եւ պատասխանեցէք հարցումներուն:

<<Գիրքը Ընկեր >>



Գիրքը խօսք է ու խօսակցութիւն եւ միշտ բացարձակապէս անհատական, այսինքն կայ միշտ մէկը, որ կը խօսի մեզի գրքին մէջէն, կը բանայ մեզի իր հոգին, կը պատմէ մեզի իր կեանքը կամ իր տեսածը, կը բացատրէ մեզի իր մտածումներն ու եզրակացութիւնները:

Գրքերուն մէջէն մեզի խօսողը յաճախ հեղինակն է միայն. մենք հեղինակի հետ է, որ անմիջական յարաբերութեան մէջ ենք: Բայց շատ անգամ հեղինակը աւելի կամ պակաս չափով ետ կը քաշուի. ինքը կը մնայ ստուերի մէջ եւ մեզի յարաբերութեան մէջ կը դնէ պատմութենէն կամ ժամանակակից իրականութենէն եկած անձերու հետ, անոնց կեանքը, գործերը, անոնց ներքինն ու արտաքինը, անոնց մտքերն ու իղծերն են, որ մենք կը տեսնենք ու կը լսենք, անշուշտ հեղինակի երեւակայած, ուզած կամ հասկցած ձեւերովը, հեղինակի դիտակին մէջէն: Շատ անգամ ալ ամբողջապէս հեղինակի հնարած եւ ամբողջովին հեղինակի հոգիէն ծնած էակներ են, որոնք որոշ անհատականութեամբ եւ որոշ կենդանի կերպարանքով կու գան մեր դէմը, կը խօսին, կը գործեն եւ կ'ապրին:

Եւ մենք կարդալու միջոցին, ինչպէս եւ ընթերցումէն ետքը, սերտ հոգեկան հաղորդակցութեան մէջ կը մտնենք այդ բոլոր տեսակի անձերուն եւ մարդոց հետ մեր հոգիին մէջ, կը վերլուծենք անոնց գրածը, կը խօսինք ու կը վիճինք անոնց հետ, կը հաւնինք, կը ժխտենք, կը վշտակցինք, կ'ատենք ու կը սիրենք: Ուրիշ խօսքով կ'ապրինք ու կը կապուինք անոնց հետ. եւ ինչքան խոր ու մեծ ըլլայ այդ անձերու մտքին, սրտին ու գործերուն թողած ազդեցութիւնը մեր հոգիին վրայ, այնքան ալ խոր ու տեսական կ'ըլլայ բնականաբար մեր կապն ու հաղորդակցութիւնը անոնց

հետ: Ճիշդ այն ձեռով , ինչ ձեռով կը կատարուի իրական կեանքի մէջ մեր իրական հանդիպումներու միջոցին մեր կապն ու շփումը ծանօթներու, ուղեկիցներու, գաղափարակիցներու հետ:

Ատոր համար է, որ մեծ հաճոյք կը զգանք մեր կարդացած ու սիրած գրքերը նորէն ու նորէն կարդալու ատեն, ինչպէս որ կեանքի մէջ մեր սիրելի բարեկամներուն վերստին հանդիպիլը խոր ուրախութիւն կը պատճառէ մեզի: Ատոր համար է, որ շտապ ու վայրիվերոյ ընթերցումը հնար չի տար ներքին անելի լուրջ մերձեցումի, երկաթուղիի կառքին մէջ կապուած ու լուծուած հարեանցի բարեկամութեան մը պէս, երեկոյթի մը իրարանցումին մէջ մեզի հետ կարճ ու հապշտապ շփումի եկած նոր բարեւածանօթի պէս: Մինչդեռ ուշադիր ու կրկնակի ընթերցումներէն է, որ հետզհետէ կ'ընտրուին մեր գրեւոր մտերիմները, ինչպէս որ դուրսի յաճախակի ու սրտբաց հանդիպումներէն է, որ կը կազմուի կեանքի մտերիմներուն նեղ շրջանակը: Ատոր համար է դարձեալ, որ երկի մը թարգմանիչը կամ իր նախընտրած դերը խաղցող դերասանը շատ յաճախ խոր եւ սրտագին մտերմութեամբ կը կապուին եւ հեղինակին հետ եւ իրենց թարգմանած կամ ներկայացուցած դէմքերուն հետ: Ատոր համար է, որ գրքերը եւ գրքերուն մէջ պատկերացուած մարդիկը իրենց ջերմ պաշտպաններն ունին, իրենց սիրահարները, ինչպէս եւ իրենց բուռն ու կրքոտ հակառակորդները:

Հոգեբանական իրողութիւն մըն է ասիկա ու կենդանի ներքին իրականութիւն մը: Գրքերուն մէջէն խօսող ու գործող մարդիկը, ըլլան իրական ու պատմական դէմքեր, ըլլան բանաստեղծական մարմնացումներ, ինչպէս եւ հեղինակը ինքը, ասոնց բոլորն ալ անխտիր ապրող ու կենդանի արարածներ են մեր հոգիներուն մէջ, իսկական մարդիկ, որոնք դուրսի աշխարհէն մեր հոգիները մտած միւս մարդոց նման եւ անոնց հաւասար, կան հոն, գոյութիւն ունին, կը շարժին, կը գործեն , կը խօսին ու կ'ազդեն:

Անոնք կ'ազդեն մեր կամքին ու գործունեութեանը իրենց օրինակով, իրենց շարժումներով, իրենց սկզբունքներով, իրենց ներշնչած հիացումով, իրենց գծած կեանքի նպատակներով: Անոնք սիրտ կու տան գոյութեան յամառ կռուին մէջ, կ'ոգեւորեն, կը բռնկեցնեն մեզի, յաճախ կը դառնան մեր իտեալը, մեր իտեալին ջահակիրը:

Լեւոն Շանթ <<Գիրքը Ընկեր >> հատուած



Ա- Տուեալ գրութեան համար գրեցէք երեք (3) տարբեր վերնագիրներ: / 3 նիշ/

Բ- Այս գրութեան սկզբնաւորութեան ի՞նչ կը կոչէ գիրքը Լեւոն Շանթ: Ո՞վ կ'ըլլայ ընթերցողին հետ խօսողը ընդհանրապէս: Ուրիշ որո՞նք կ'ըլլան ընթերցողին հետ խօսողները: Յիշեցէք երկու (2) պարագաներ: / 5 նիշ/

Գ- Հեղինակը երրորդ պարբերութեան մէջ ի՞նչ կը գրէ հաղորդակցութեան մասին: Ինչպէ՞ս կը բացատրէ այդ գաղափարը: Իսկ ուրիշ խօսքով ի՞նչ կը կատարուի ըստ Լեւոն Շանթի: / 6 նիշ/

Դ- Կարդացած ու սիրած գիրքը նորէն կարդալու կապակցութեամբ ի՞նչ կը գրէ հեղինակը: Կեանքի մէջ կատարուող ի՞նչ բանի հետ կը համեմատէ : Ի՞նչ կ'ըսէ այս մասին: / 6 նիշ/

Ե- Գրեցէք թէ հեղինակը ի՞նչ մտածումներ ունի շտապ կարդացուող եւ ընդհակառակը ուշադիր կարդացուող գիրքերու մասին: Ինչպէս նաեւ գիրքերու ընդմէջէն խօսող մարդոց ունեցած ազդեցութեանց մասին:

(Շուրջ 80 բառ) /10 նիշ/

3 ՇԱՐԱԴՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ (40 նիշ)



<<Լեզուն է ամեն մի ժողովուրդի ազգային գոյութեան եւ ետեւան ամենախոշոր փաստը>> Յովհաննէս Թումանեան

Գրեցէք ձեր մտածումները եւ զգացումները մայրենի լեզուի մասին:

Բացատրեցէք այն սորվելու եւ այդ լեզուով գրականութիւն կարդալու կարեւորութիւնը եւ իմաստը աշակերտներու եւ աշակերտուհիներու երկրորդական կրթութեան ընթացքին մէջ: (Շուրջ 350 բառ)



Ուշադրութիւն դարձուցէք ուղղագրութեան եւ ձեռագիրին:

Յ Ա Ջ Ո Ղ Ո Ւ Թ Ի Ի Ն

ΤΕΛΟΣ ΕΞΕΤΑΣΤΙΚΟΥ ΔΟΚΙΜΙΟΥ